չադր զարկեր ա. գացի էն մարդ տեսայ ու մոնհան էրեցի, ջուր չ'բերեցի։

—Օր հմալ է, ըսեց, գնա էն մարդ խանչա, բի։

Մսրամելիքի քուր գնաց ու Դաւթին խանչեց, բերեց։

Ու էկաւ էդտեղ նստաւ. եօթն օր բրընձ փլաւ ու գառու միս կերաւ Մսրամելիքի հետ. եօթն օր օր թմաւ, էլաւ, հեծաւ ուր ձին, չադր վերուց, էկաւ տէրտրոջ տուն, ուր շորեր փոխեց, ուրիշ շոր հագաւ ու ուրիշ ձի մի հեծաւ, էկաւ, կայնաւ Մսրամելիքի չադրի դուռ ու ըսեց.—Եարօ, քու վախտին հաղըր կեցի։

Մսրամելիք հարցուց թէ՝—Ո՞րն իս դուռ։

Թէ՝—Ես Դաւթի չիբուխչին իմ։

Դարձաւ, էկաւ Դաւիթ. էկաւ Քուռկէ-Ջալին դուս քաշեց, թամքեց ու գամեց, ուր շորեր հագաւ, Սրի Նշան համբուրեց, ծոց դրեց ու ձին քշեց, էկաւ Մսրամելիքի չադրի դուռ։

—Եարօ, քու վախտին հաղըր կեցի։

Ըսեց.—Դուռ ո՞րն իս։

Ըսեց.—Ես Դաւիթն իմ, Մսրամելիք. ըսեց՝ էլի իդա տեղ կռիւ էնինք, եա Աստուած ընձի կ'իտայ, եա քըզի։

Ու Մսրամելիք սիլահտորաւ ու չադրից դուս էկաւ։

Մսրամելիք Դաւթին ըսեց թէ՝—Արի՛ կռիւ չ'էնինք։

Ըսեց.—Զէ՛, չ'էղնի, պդի կռիւ էնինք։

Մսրամելիքն ըսեց.—Դաւիթ, ի՞մալ կռիւ էնինք։

Ըսեց.—Ես կ'չոքիմ, դուռ թրով ընձի զարկ։

Դաւիթ չոքաւ։

Մսրամելիք ըսեց.—Դաւիթ, արի՛, ես քըզի կ'էղնիմ խուլ, կռիւ չ'էնինք։

Դաւիթ ըսեց.—Զէ՛ղնելոց բան է, ընձի օր չոքըցուցիր՝ քու դըրբ զարկ։

Մսրամելիք մէկ թուր թալեց Դաւթին ու հարցուց.—Ի՞մալ իս, Դաւիթ։

Ըսեց.—Սրի Նշանի զօրուտենով ինչ օր ընձի լու մի խածէ։